**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ**
**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13 մայիսի 2025 թվական, № 18**

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 11.02.2015 Թ. ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ «ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ», «ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ» ԵՎ «ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՔՈԼԵՋԻ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ» ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2024թ. դեկտեմբերի 12-ի № 1989-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 52-րդ կետի 17-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի գիտական խորհուրդը **որոշում է՝**

**1.** Հաստատել ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանումում հիմնական կրթական ծրագրերով ուսուցման կարգը՝ համաձայն հավելվածի:

**2.** Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 11.02.2015 թ. որոշմամբ հաստատված՝ «ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայում բակալավրի եվ մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը», «ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնում ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը» և «ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման

**3.** Սույն որոշման հավելվածի 57-րդ կետով նախատեսված դրույթը գործում է 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակից:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՌԵԿՏՈՐԻ**
**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,**
**ԻՆՔԸ ԵՎ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ**
**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ** **Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

«ՀԱՎԵԼՎԱԾ»

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական խորհրդի 13.05.2025 թ. թիվ 18 որոշման:

# Կ Ա Ր Գ

# ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ

## I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի (այսուհետ՝ Կրթահամալիր) ոստիկանական ուսումնական ստորաբաժանումում (այսուհետ՝ ուսումնական ստորաբաժանում) արհեստագործական, միջին մասնագիտական, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգերը, ակադեմիական առաջադիմության չափանիշները, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման կազմակերպման ընթացակարգերը:

2. Ուսումնական ստորաբաժանումում ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման հիմնական խնդիրներն են՝

1) համապատասխան մասնագիտական կրթություն և որակավորում ստանալու՝ անհատի պահանջմունքի բավարարումը.

2) սովորողների գիտելիքների զարգացման և նրանց ընդհանուր պատրաստվածության մակարդակի բարձրացման ապահովումը:

3. Ուսումնական գործընթացի կազմակերպումը նպատակ ունի ապահովելու՝

1) տեսական և գործնական ուսուցման հավասար հարաբերակցությունը.

2) առարկայի (մոդուլի) տրամաբանորեն ճիշտ կառուցված, դասավանդման գիտական և մեթոդական մոտեցումների համատեղումն ու հաջորդականությունը, ուսումնական գործընթացի պարբերականությունը.

3) ուսումնական գործընթացում գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների. ոստիկանության և այլ պետությունների համապատասխան ծառայությունների գործնական փորձի ներդրումը.

4) պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտամանկավարժական գործունեության և սովորողների կողմից մասնագիտական ուսումնական ծրագրերի յուրացման, նրանց ստեղծագործական ինքնուրույն աշխատանքի համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

4. Ուսումնական ստորաբաժանումում ուսումնական գործընթացի բովանդակությունն արտահայտող ու կազմակերպումն ապահովող հիմնական փաստաթղթերն են՝ պետական կրթական չափորոշիչները (որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերը), ուսումնական պլանները և առարկայական նկարագրերը (մոդուլային ծրագրերը):

5. Ուսումնական պլանը ներառում է ուսումնական գործընթացի ժամանակացույցը, որն էլ ընդգրկում է ուսումնական առարկաների (մոդուլների) ցանկը, դրանց ուսումնասիրման ժամանակը, պարբերականությունն ու տրամաբանական հաջորդականությունը, պարապմունքների, պրակտիկաների տեսակները, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ձևերը: Ուսումնական պլանը մշակվում է ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժնի կողմից:

6. Առարկայական նկարագրով (մոդուլային ծրագրով) նախատեսված ուսումնական պարապմունքների համար ամբիոնը կազմում և հաստատում է մեթոդական պլաններ, որոնք պետք է բովանդակեն առարկայի անվանումը, դասախոսի անունը և ազգանունը, պարապմունքի թեման, նպատակը, կառուցվածքը՝ նշելով դասախոսի կողմից կատարման ենթակա գործողությունները, դրանց տևողությունը և կազմակերպամեթոդական ցուցումները: Սեմինար կամ գործնական պարապմունքի մեթոդական պլանին պետք է կցվեն նշված պարապմունքի ընթացքում սովորողների կողմից կատարման ենթակա պարտադիր նվազագույն ծավալի առաջադրանքները և սովորողների ինքնուրույն աշխատանքի համար տրվող հանձնարարությունները:

7. Առարկայական նկարագիրը (մոդուլային ծրագիրը) ներառում է ուսումնական առարկայի բաժինների և թեմաների ուսումնասիրման բովանդակությունը, հաջորդականությունն ու ժամաքանակը: Այն մշակվում է ուսումնական պլանում ներառված յուրաքանչյուր առարկայի համար՝ մասնագիտության հաշվառմամբ և բովանդակային առումով վերաբերում է ուսուցման ձևին: Առարկայական նկարագիրը (մոդուլային ծրագիրը) ներառում է այն պարզաբանող ներածությունը, առարկայի (մոդուլի) թեմատիկ պլանը և ուսումնասիրման ենթակա հարցերը: Առարկայական նկարագիրը բովանդակում է նաև առարկայի (մոդուլի) հիմնական ու լրացուցիչ գրականության ցանկը:

8. Դասախոսների բաշխումն իրականացվում է ամբիոնի կողմից, ինչի վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժին: Անհրաժեշտության դեպքում ամբիոնի պետի՝ Կրթահամալիրի ռեկտորին ուղղված դիմումի հիման վրա՝ գործնական հմտությունների ձևավորմանն ուղղված առարկաների (մոդուլների)

դասավանդումը նույն խմբում (դասակում) կարող է իրականացվել մեկից ավել դասախոսների կողմից:

9. Լսարանային ֆոնդի ցանկը կազմվում է ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժնի կողմից:

10. Կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժինը կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակը: Դասացուցակը պետք է ներառի յուրաքանչյուր կուրսի, հոսքերի (խմբերի) պարապմունքների անցկացման ժամանակի, տեղի, ինչպես նաև դասավանդող անձանց մասին ամբողջական տեղեկատվություն:

11. Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալ չափանիշներով՝

1) սովորողներն ըստ ուսումնական խմբերի (դասակների) բաշխվում են հավասարաչափ՝ ուսումնական յուրաքանչյուր խմբում (դասակում) 20-ից 25 սովորող համամասնությամբ: Ելնելով անհրաժեշտությունից կարող է ձևավորվել սույն կետում նշված քանակը գերազանցող խումբ (դասակ): Խմբերը (դասակները) ձևավորվում են Կրթահամալիրի ռեկտորի հրամանով.

2) լսարանային պարապմունքների բոլոր ձևերի համար ակադեմիական ժամը սահմանվում է 45 րոպե տևողությամբ: Թույլատրվում է անցկացնել զուգորդված պարապմունքներ՝ 80 րոպե տևողությամբ.

3) ուսումնական պարապմունքներից սովորողներին մեկ օրով ազատելը (բացի հիվանդներից և օրվա վերակարգից) իրականացվում է ուսումնական ստորաբաժանման պետի, իսկ մեկ օրից ավել ժամանակով՝ Կրթահամալիրի ռեկտորի թույլտվությամբ:

12. Հեռակա ուսուցման՝ ոստիկանության ծառայող սովորողի մասնակցությունն ուսումնաքննական հավաքին ապահովելու համար համապատասխան ստորաբաժանման պետին ուղարկվում է տեղեկանք-կանչ ուսումնաքննական հավաքը սկսվելուց առնվազն 20 օր առաջ՝ սովորողին ուսումնական արձակուրդ տրամադրելու համար:

13. Ուսումնաքննական հավաքի ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում համապատասխան ստորաբաժանման պետին է ուղարկվում ոստիկանության ծառայող՝ հեռակա ուսուցմամբ սովորողի հաճախումների և առաջադիմության մասին տեղեկանք :

14. Ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնական հաշվառման փաստաթղթերն են՝

1) ուսումնական պարապմունքների հաշվառման մատյանը.

2) քննական, ստուգարքային (դիֆստուգարքային), կուրսային աշխատանքի, պրակտիկայի պաշտպանության և ուսումնառության արդյունքների տեղեկագիր (անհատական թերթիկ).

3) սովորողի ստուգման գրքույկը.

4) սովորողի ակադեմիական տեղեկագիրը:

15. Ուսումնական ստորաբաժանումում պարապմունքներն անցկացվում են դասավանդման հետևյալ ձևերով՝

1) դասախոսություն.

2) սեմինար պարապմունք.

3) գործնական պարապմունք.

4) լաբորատոր պարապմունք.

5) գործնական խաղ:

16. Կրթահամալիրի ռեկտորի, կրթահամալիրի ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտորի, ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժնի պետի, ուսումնական ստորաբաժանման պետի (տեղակալի), դեպարտամենտի պետի, համապատասխան ամբիոնի պետի կողմից ուսումնական գործընթացի իրականացման նկատմամբ սահմանվում է ընթացիկ հսկողություն (հսկողական դասալսումներ), որի նպատակն է պարզել՝

1) ուսումնական գործընթացի կազմակերպման համապատասխանությունը այն կանոնակարգող նորմատիվ և ներքին իրավական ակտերին.

2) սովորողների գիտելիքների, ունակությունների և հմտությունների մակարդակը.

3) աշխատանքային ուսումնական պլանների և առարկայական նկարագրի (մոդուլային ծրագրի) կատարումը.

4) պարապմունքների անցկացման մեթոդական մակարդակը.

5) ուսումնական պարապմունքների նյութատեխնիկական ապահովվածության մակարդակը և ուսումնանյութական բազայի վիճակը.

6) պարապմունքների ընթացքում կարգապահության վիճակը:

17. Հսկողական դասալսումներ իրականացնող անձը պարտավոր է լսարան մտնել դասախոսի հետ միասին և ներկա գտնվել մինչև պարապմունքի ավարտը: Պարապմունքի ընթացքում նրան չի թույլատրվում միջամտել դասախոսի աշխատանքին կամ կատարել դիտողություններ:

18. Հսկողական դասալսումից հետո (ոչ ուշ քան հաջորդ օրը) ստուգողն անցկացնում է պարապմունքի քննարկում՝ դասախոսի մասնակցությամբ, որի ընթացքում վերլուծվում է պարապմունքի անցկացման և մեթոդիկայի դրական ու բացասական կողմերը, արվում են առաջարկություններ թերությունները վերացնելու վերաբերյալ:

## II. Կրեդիտային համակարգի նկարագիրը

19. Կրեդիտային համակարգով ուսումնառությունն իրականացվում է համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգի սահմանումների և դրույթների հիման վրա.

1) **կարողությունը** գիտելիքի, իմացության և ունակությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր.

2) **կրթական արդյունքն** այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել սովորողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատելու դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման վերաբերյալ: Կրթական արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները.

3) **կրթական (ուսումնական) մոդուլը** ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն միավորն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները սովորողին շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով.

4) **ECTS կրեդիտը** դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար սովորողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է սովորողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

20. ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.

1) ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է սովորողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն.

2) կրեդիտը չափում է սովորողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում կամ սովորողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը).

3) կրեդիտը սովորողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Սովորողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման միավորների) հետ միասին.

4) ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը. այն չափում է սովորողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը.

5) կրեդիտը չի փոխարինում սովորողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ սովորողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով).

6) կրեդիտը չի արտահայտում սովորողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

21. Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժեվորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

22. Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ սովորողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում սովորողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

23. ECTS համակարգի կարևորագույն հատկանիշներն են.

1) կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար սովորողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը.

2) կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն.

3) կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների ելքային կրթական արդյունքները և հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են նախապես և հասանելի են դրանցից օգտվողներին (սովորողներին և դասախոսներին):

24. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթներն են՝

1) կրեդիտների փոխանցում. այս գործառույթը ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր դասընթացների և կրթական մոդուլների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի և բուհերի միջև.

2) կրեդիտների կուտակում. այս գործառույթի իրականացումը ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթաց, ինչն իրականացվում է սովորողի անհատական ուսումնական ծրագրի օգնությամբ:

Նշված գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով:

25. Կրեդիտների փոխանցման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

1) գործում են մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլ) աշխատածավալները տրված են սովորողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով.

2) կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան:

26. Կրեդիտների կուտակման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

ա) պարտադիր և ընտրովի դասընթացներից բաղկացած ուսումնական ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրի յուրացման հաջորդականությունը սահմանվում է դասընթացների նախապայմաններով,

բ) սովորողի կողմից դասընթացների ընտրություն,

գ) սովորողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,

դ) դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում սովորողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ ելնելով դասընթացի կայացման ժամանակացույցից և (կամ) դասախոսի նախապատվությունից:

27. Ուսումնական ստորաբաժանման առկա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում սովորողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի: Հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում սովորողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1440 ժամ, որը համարժեք է 48 ECTS կրեդիտի:

28. Մեկ ECTS կրեդիտը համարժեք է սովորողի 30 լրիվ կամ 36 ակադեմիական ժամի ուսումնական բեռնվածությանը:

29. Ուսումնական ստորաբաժանումում ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով: Ուսումնական տարվա և կիսամյակի ուսումնական պարապմունքների տևողությունը (հեռակա ուսուցման սովորողների ուսումնաքննական հավաքները՝

բացառությամբ 1-ին կիսամյակի) սահմանվում է ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցով:

30. Առկա ուսուցման համակարգում ընդգրկված սովորողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:

31. Ուսումնական ստորաբաժանման կրթական ծրագրերում սովորողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կարող է լինել մինչև 30 ակադեմիական ժամ՝ առանց ֆիզիկական պատրաստականության (ֆիզիկական կուլտուրայի):

32. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է, իսկ մագիստրոսի կրթական ծրագրինը՝ 120 կրեդիտ:

33. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:

34. Մեծածավալ դասընթացներն (կրթական մոդուլները) անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:

35. Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝

1) պարտադիր դասընթացներ,

2) կամընտրական դասընթացներ:

36. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար սովորողից պահանջվող միջին աշխատաժամանակի (լրիվ ուսումնական բեռնվածության) իրատեսական կանխատեսումից: Հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև միարժեք կապ չկա: Կրեդիտների թիվը, ինչպես արդեն նշվել է, կախված է նաև պարապմունքի ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդներից և այլն:

37. Դասընթացի ծրագիրը մշակող ուսումնական կառույցը (ամբիոնը) այնպես է պլանավորում սովորողի ուսումնական աշխատանքը, որպեսզի դրա կատարման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքին:

38. Կրթական դասընթացին և մոդուլին հատկացված կրեդիտները պետք է ներկայացվեն ամբողջական թվերով:

39. Բակալավրի և մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ուսումնական ստորաբաժանման սովորողը պետք է ծրագրի կատարման արդյունքում հաջողությամբ լրացնի համապատասխանաբար 240 և 120 կրեդիտ ուսումնական բեռնվածություն, որի

համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 8.00:

40. Այլ բուհերից ուսումնական ստորաբաժանման վճարովի ուսուցման կրթական ծրագրեր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների (կիսամյակ, ուստարի) տեսքով: Փոխանցումը կատարվում է սովորողի հայտի հիման վրա՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

41. Կրեդիտները կարող են փոխանցվել, եթե դրանց բովանդակությունները միանման են, կամ առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

42. Կրեդիտների փոխանցման և սովորողների միջբուհական փոխանակման գործընթացները կազմակերպվում են համապատասխան դեպարտամենտի կողմից:

## III. Գիտելիքների ստուգման, գնահատման համակարգը և մեթոդաբանություն

43. Ուսումնական ստորաբաժանման կրթական ծրագրերում գործում է սովորողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

1) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել սովորողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր,

2) ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել դիագնոստիկ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և սովորողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

44. Կուրսային աշխատանքի պաշտպանությունից և պրակտիկումից անբավարար գնահատական ստացած, ինչպես նաև դրանք չներկայացրած սովորողը կարող է մասնակցել տվյալ դասընթացի եզրափակիչ քննությանը: Ստուգողական աշխատանքի բացասական արդյունքի դեպքում բակալավրիատի հեռակա ուսուցման սովորողը չի կարող մասնակցել տվյալ դասընթացի ստուգարքին կամ քննությանը:

45. Ելնելով ուսումնական գործընթացի պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) ծավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից, սովորողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ դասընթացի կարևորությունից՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

1) միավորով գնահատվող դասընթացներ (քննություն և դիֆերենցված ստուգարք),

2) ստուգարքային գնահատումով դասընթացներ:

46. Կրթական ծրագրերում յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում կարող է ներառվել եզրափակիչ քննության ձևով առավելագույնը 6 մասնագիտական դասընթաց, բացառությամբ առաջին կիսամյակի, որտեղ այդ դասընթացների քանակը սահմանափակվում է 3-ով:

47. Բակալավրիատում քննության ձևով գնահատվող դասընթացը՝ եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 միջանկյալ քննություն:

48. Միջին մասնագիտական կրթական ծրագրում ուսումնառության արդյունքների քանակը նախատեսվում է ուսումնական պլանով:

49. Միջանկյալ քննությունը անցկացվում է ուսումնական գործընթացի պլանով նախատեսված կիսամյակներում՝ ըստ ժամանակացույցի:

50. Միջանկյալ քննությունը անցկացվում է գրավոր ձևով, իսկ ուսումնառության արդյունքների ձեռքբերման մակարդակի ստուգումը՝ նաև բանավոր:

51. Միջանկյալ քննությունից մեկ շաբաթ առաջ ամբիոնը սովորողներին տրամադրում է տվյալ դասընթացի (կրթական մոդուլի) միջանկյալ քննական հարցաշար, որոնց շրջանակներում իրականացվելու է միջանկյալ քննությունը:

52. Ուսումնառության արդյունքների ձեռքբերման մակարդակի ստուգումից մեկ շաբաթ առաջ ամբիոնը սովորողներին իրազեկում է այն թեմաների անվանումը, որոնցով իրականացվելու է ստուգումը:

53. Միջանկյալ քննության տարբերակները կազմվում են տվյալ դասընթացի ծրագրի շրջանակներում և հաստատվում են ամբիոնի նիստում, որոնք ներառում են 2 հարց՝ յուրաքանչյուրը առավելագույնը 1 միավոր գնահատումով: Հարցերը կարող են լինել տեսական բնույթի կամ ունենալ գործնական առաջադրանքի (խնդիր, թեստ) տեսք:

54. Միջանկյալ քննությանը կամ ուսումնառության արդյունքների ձեռքբերման մակարդակի ստուգումից հարգելի պատճառներով բացակայած սովորողի միջանկյալ քննությունը կամ ստուգումը կազմակերպվում է ոչ ուշ քան տվյալ օրվան հաջորդող երկու շաբաթվա, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ մեկ շաբաթվա ընթացքում:

55. Յուրաքանչյուր միջանկյալ քննության ժամանակ սովորողի առաջադիմությունը գնահատվում է առավելագույնը 2 միավոր՝ 0.5 միավոր գնահատման քայլով: Միջանկյալ քննության ընդհանուր վերջնական գնահատականը կլորացվում է ի օգուտ սովորողի:

56. Միջանկյալ քննության արդյունքները պահպանվում են նաև եզրափակիչ քննության վերահանձնման ժամանակ:

57. Ուսումնառության յուրաքանչյուր արդյունքի ձեռքբերման մակարդակի ստուգման ժամանակ սովորողի առաջադիմությունը գնահատվում է առավելագույնը 1 միավոր:

58. Եզրափակիչ քննությունը (դիֆերենցված ստուգարքը) անցկացվում է բանավոր ձևով՝ բացառությամբ գործնական հմտություններ նախատեսող դասընթացների: Եզրափակիչ քննության (դիֆերենցված ստուգարքի) բանավոր ձևը կարող է համատեղվել գործնական առաջադրանքի (խնդիր, թեստ և այլն) հետ:

59. Եզրափակիչ քննությունն (դիֆերենցված ստուգարքը) անցկացվում է դասընթացի (կրթական մոդուլի) ծավալով: Եզրափակիչ քննության (դիֆերենցված ստուգարքի) հարցաշարում և տոմսերում չեն կարող ընդգրկվել նախորդ կիսամյակի առարկայական նկարագրով (մոդուլային ծրագրով) նախատեսված թեմաներին վերաբերող հարցեր, եթե նախորդ կիսամյակում տվյալ դասընթացը (կրթական մոդուլը) ավարտվել է ստուգման որևէ ձևով:

60. Եզրափակիչ քննության (դիֆերենցված ստուգարքի) անցկացման համար ամբիոնի կողմից մշակվում և նախապատրաստվում են՝

1) հարցաշարեր և տոմսեր, որոնց թիվը պետք է գերազանցի ուսումնական խմբի քննվող սովորողների թիվը.

2) սովորողներին հանձնարարվող գործնական առաջադրանքները, խնդիրները և թեստերը.

3) ուսումնատեխնիկական ապահովման միջոցները (սարքեր, տեխնիկա, զենք և այլն):

61. Քննության (դիֆերենցված ստուգարքի) անցկացման համար անհրաժեշտ հարցաշարերը, տոմսերը, գործնական առաջադրանքները, խնդիրները և թեստերը, ինչպես նաև քննության ընթացքում անհրաժեշտ ուսումնատեխնիկական ապահովման միջոցների ցանկը քննարկվում և հաստատվում են ամբիոնի նիստում՝ ոչ ուշ, քան քննաշրջանն սկսվելուց 10 օր առաջ:

62. Քննական տոմսը պետք է բովանդակի 3 հարց (դիֆերենցված ստուգարքի տոմսը՝ 2 հարց)՝ դասընթացի (կրթական մոդուլի) ծրագրի բաժիններից, որոնցից մեկը պետք է լինի խնդրի ձևով: Դասընթացի (կրթական մոդուլի) առանձնահատկություններով պայմանավորված՝ խնդրի փոխարեն կարող է նախատեսվել գործնական այլ առաջադրանք: Արգելվում է սովորողների նախնական ծանոթացումը քննական (դիֆերենցված ստուգարքի) տոմսերին:

63. Քննությունը (դիֆերենցված ստուգարքը) ընդունվում է տվյալ դասընթացը (կրթական մոդուլը) դասավանդած անձի կողմից: Հարգելի պատճառներով նրա բացակայության դեպքում քննությունը (դիֆերենցված ստուգարքը) ընդունվում է ամբիոնի պետի, կամ վերջինիս որոշմամբ՝ տվյալ առարկայի այլ մասնագետի կողմից:

64. Քննության (դիֆերենցված ստուգարքի) ժամանակ լսարանում միաժամանակ կարող է գտնվել հինգից ոչ ավելի քննություն հանձնող սովորող: Պատասխանին պատրաստվելու համար սովորողին տրվում է մինչև 30 րոպե ժամանակ: Քննությունը (դիֆերենցված ստուգարքը) ընդունողը տոմսի հարցերին պատասխանելուց հետո սովորողին կարող է առաջադրել լրացուցիչ և պարզաբանող հարցեր՝ քննությանը ներառված ուսումնական նյութի սահմաններում: Սովորողը տոմսն ընտրում է ինքնուրույն՝ պատահականության սկզբունքով: Արգելվում է փոխել ընտրված տոմսը: Սովորողի կողմից տոմսի հարցերին ակնհայտ սխալ պատասխանելու դեպքում՝ պատասխանը հստակեցնելու և ճշգրտելու նպատակով քննությունը (դիֆերենցված ստուգարքը) ընդունող անձը, սովորողի միտքն ավարտելուց հետո, կարող է նրան ուղղել հարցեր:

65. Քննության (դիֆերենցված ստուգարքի) արդյունքների հիման վրա նշանակված գնահատականը հայտարարվում է սովորողին, նշվում համապատասխան տեղեկագրում և ստուգման գրքույկում: Անբավարար գնահատականը նշանակվում է միայն համապատասխան տեղեկագրում: Քննությանը (դիֆերենցված ստուգարքին) չներկայանալու դեպքում համապատասխան տեղեկագրում կատարվում է «Չի ներկայացել» գրառումը, որը հավասարազոր է անբավարար գնահատականին: Չի թույլատրվում տեղեկագրում այլ գրառումներ կամ ջնջումներ կատարելը:

66. Բակալավրիատի և մագիստրատուրայի՝ եզրափակիչ գնահատումով քննական դասընթացից ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը (միավորը) (Գարդ.) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

1) միջանկյալ քննությունների արդյունքներից (∑Քմիջ.), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 2 միավոր.

2) եզրափակիչ քննության արդյունքից (Քեզր.), որը կարող է գնահատվել մինչև 16 միավոր: Դասընթացի արդյունարար գնահատականը (միավորը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝ Գարդ. = ∑Քմիջ. + Քեզր.:

Ըստ այդմ, եզրափակիչ գնահատումով քննական դասընթացն ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով).

| Գնահատման բաղադրամասը | Քմիջ.1 | Քմիջ.2 | Քեզր. | Գարդ. |
|---|---|---|---|---|
| Միավորը | 2 | 2 | 16 | 20 |
| Օրինակ, եթե սովորողը դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից վաստակել է համապատասխանաբար 2 և 1 միավորներ, իսկ | | | | |

| |
|---|
| եզրափակիչ քննությունից՝ 10 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի 13: |
| Գարդ.= 2 + 1 + 10 = 13: |

67. Միջին մասնագիտական կրթական ծրագրի՝ եզրափակիչ գնահատումով քննական դասընթացից ստացած եզրափակիչ գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

1) ուսումնառության արդյունքների ձեռքբերման մակարդակի ստուգումից, որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 1 միավոր.

2) եզրափակիչ քննության արդյունքից:

Դասընթացի եզրափակիչ գնահատականը (միավորը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար:

Օրինակ՝

| Գնահատման բաղադրամասը | Ուար.1 | Ուար.2 | Ուար.3 | Քեզր. | Գեզր. |
|---|---|---|---|---|---|
| Միավորը | 1 | 1 | 1 | 7 | 10 |

68. Առանց միջանկյալ քննության (ուսումնառության արդյունքների ձեռքբերման մակարդակի ստուգման) դասընթացի (մոդուլի), վարժախաղի, պրակտիկայի, կուրսային աշխատանքի պաշտպանության, ինչպես նաև դիֆերենցված ստուգարքների գնահատման պարագայում գործում է 73-րդ կետով սահմանված սանդղակը:

69. Ստուգարքն անցկացվում է մինչև քննաշրջանը՝ համապատասխան դասընթացի ծրագրի ավարտից հետո՝ ուսումնական գործընթացի պլանին համապատասխան և առարկայական նկարագրի (մոդուլային ծրագրի) ծավալով:

70. Ստուգարքը կարող է անցկացվել տոմսերով կամ առանց տոմսերի (հարցազրույցի միջոցով)՝ ամբիոնի որոշմամբ:

71. Ստուգարքի հանձնման ընթացքում սովորողների տեսական գիտելիքները և գործնական հմտությունները գնահատելիս՝ հաշվի են առնվում նրանց մասնակցությունը սեմինար, գործնական ու լաբորատոր պարապմունքներին: Նշված պարապմունքներին բարձր ընթացիկ առաջադիմություն ապահովելու դեպքում սովորողի ստուգարքը նշանակվում է «ստուգված»: Ուսումնառության արդյունքների ձեռքբերման մակարդակի ստուգմամբ դրական միավորներ ապահովելու դեպքում սովորողի ստուգարքը նշանակվում է «ստուգված»:

72. Եզրափակիչ քննությունների, ստուգարքների, ինչպես նաև վերահանձնումների ժամանակացույցերը կազմում են ուսումնական ստորաբաժանումների

համապատասխան դեպարտամենտները և հաստատվում են Կրթահամալիրի ռեկտորի կողմից: Քննությունների հաստատված ժամանակացույցի պատճենը հանձնվում է Կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժին:

73. Միջանկյալ քննություններն անցկացվում են համապատասխան դեպարտամենտների պետերի կողմից կազմված և ուսումնական ստորաբաժանման պետի տեղակալի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան: Ուսումնառության արդյունքների ձեռքբերման մակարդակի ստուգումներն անցկացվում են տվյալ մոդուլի ծրագրի հիման վրա՝ ըստ դասացուցակի:

74. Միջանկյալ քննության գրավոր պատասխանները համապատասխան դասախոսի կողմից ստուգվում են քննությանը հաջորդող մեկ շաբաթվա ընթացքում: Արդյունքների վերաբերյալ սովորողներին իրազեկելուց հետո՝ դասախոսը միջանկյալ քննական տետրերը ներկայացնում է համապատասխան դեպարտամենտ և լրացնում համապատասխան տեղեկագրում:

75. Եզրափակիչ քննություններն անցկացվում են ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցով սահմանված ժամկետներում:

76. Եզրափակիչ քննության (ստուգարքի) ավարտից հետո դասախոսը քննական (ստուգարքային) տեղեկագիրը նույն օրը ներկայացնում է համապատասխան դեպարտամենտ:

77. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում սովորողի 20 միավորով գնահատվող դասընթացների, կուրսային աշխատանքների պաշտպանության, ստուգարքային գնահատումով դասընթացների, պրակտիկումի գնահատման համար կիրառվում է գնահատման հետևյալ սանդղակը.

| Գնահատման արդյունարար միավոր | Գնահատականը տառանշումով |
|---|---|
| 18-20 | Գերազանց |
| 13-17 | Լավ |
| 8-12 | Բավարար |
| 0-7 | Անբավարար |
| 0 | Չներկայացած / չի ներկայացրել |
| Ստուգարքային գնահատում | Ստուգված / Չստուգված |

78. Սովորողի ստուգարքային գրքույկում և դասընթացի ամփոփիչ քննական տեղեկագրում գնահատման արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ 18 (գերազ.)):

79. Դասընթացներից, որոնցից սովորողը վաստակել է 8-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է «Չստուգված», կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում սովորողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում սովորողի միջին որակական գնահատականի (ՄՈԳ) ձևավորման վրա:

80. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողների 10 միավորով գնահատվող մոդուլի և ստուգարքային գնահատումով մոդուլի գնահատման համար կիրառվում է հետևյալ սանդղակը՝

| *Գնահատման միավոր* | *Գնահատականը փառանշումով* |
|---|---|
| 9-10 | Գերազանց |
| 7-8 | Լավ |
| 4-6 | Բավարար |
| 0-3 | Անբավարար |
| 0 | Չներկայացած |
| Ստուգարքային գնահատում | Ստուգված / Չստուգված |

81. Սովորողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ուսումնական ստորաբաժանման բակալավրիատի և մագիստրատուրայի յուրաքանչյուր սովորողի համար՝ նրա ընդունման պահից սկսած վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են սովորողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է սովորողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

82. Սովորողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

83. Սովորողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը սովորողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

1) գումարային կրեդիտների քանակը,

2) գնահատված կրեդիտների քանակը,

3) վարկանիշային միավորները,

4) միջին որակական գնահատականը:

84. Գումարային կրեդիտը (Կ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով սովորողի վաստակած կրեդիտների գումարն է:

85. Գնահատված կրեդիտը (ԳԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

$$ԳԿ = \sum ԿՐԵԴԻՏ$$

86. Վարկանիշային միավորը (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար սովորողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

$$ՎՄ = \sum ԿՐԵԴԻՏ \times Գ_{արդ.}$$

որտեղ $Գ_{արդ.}$ -ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է:

| |
|---|
| Օրինակ, եթե սովորողը 5, 4 և 6 կրեդիտանոց դասընթացներից գնահատվել է (վաստակել է) համապատասխանաբար 12, 16 և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից սովորողի վաստակած վարկանիշային միավորը հավասար է՝ ՎՄ = 5 x 12 + 4 x 16 + 6 x 19 = 238-ի: Այսպիսով՝ պոտենցիալ 300 հնարավոր վարկանիշային միավորից (5 x 20 + 4 x 20 + 6 x 20) սովորողը վաստակել է 238-ը: |

87. Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$ՄՈԳ = ՎՄ:ԳԿ$$

| |
|---|
| Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի՝ ՄՈԳ = 238 : 15 = 15,87: Այսինքն սովորողի ՄՈԳ-ը տվյալ դեպքում կկազմի 15,87՝ հնարավոր 20 միավորից: |

88. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

89. Ուսումնառության առաջին կիսամյակի սկզբում մագիստրոսական ծրագրում ընդգրկված սովորողը համապատասխան դեպարտամենտից ստանում է ուսումնառության

իր անհատական ծրագիրը, որտեղ նախապես լրացված են ուսումնական և հետազոտական կառուցամասերի բաղկացուցիչ դասընթացները:
90. Անհատական ծրագրում տրվում է դասընթացների ընտրացանկն ըստ ուսման կիսամյակների և տարիների՝ դրանց հատկացված կրեդիտների հետ միասին, որ ներառվում է մագիստրոսի կրթական ծրագրի սովորողների ուսումնառության անհատական ծրագրում:
91. Սովորողը պատասխանատու է ուսումնառության իր անհատական ծրագրի ճշտության և ամբողջականության ապահովման համար:
92. Գիտական ղեկավարի սեմինարի ատեստավորումը կատարում է մագիստրանտի գիտական ղեկավարը: Պրակտիկաների ատեստավորումը կատարում է համապատասխան ամբիոնը:
93. Ուսումնական պլանների պահանջները կատարած, ինչպես նաև մինչև երկու «անբավարար» գնահատական ստացած սովորողները (պայմանով) հաջորդ կուրս փոխադրվում են Կրթահամալիրի ռեկտորի հրամանի հիման վրա:
94. Քննությանը կամ ստուգարքին չներկայանալը հարգելի համարելու վերաբերյալ վերջնական որոշում կայացնում է Կրթահամալիրի ռեկտորը՝ սովորողի զեկուցագրի (դիմումի) և համապատասխան փաստաթղթի հիման վրա: Քննությանը կամ ստուգարքին չներկայանալու դեպքում սովորողը զեկուցագիր (դիմում) և համապատասխան փաստաթուղթ ներկայացնում է ոչ ուշ քան տվյալ կիսամյակի քննությունների հանձնման ժամանակացույցով նախատեսված վերջին քննությանը հաջորդող օրը:
95. Հարգելի պատճառներով կիսամյակային քննությանը կամ ստուգարքին չներկայացած, ինչպես նաև վերահանձնումների ժամանակ հարգելի պատճառներով չներկայացած սովորողը կարող է այն հանձնել անհատական ժամանակացույցով:
96. Ակադեմիական պարտքերի մարումը կազմակերպվում է երկու շրջանով: Ակադեմիական պարտքերի մարման 2-րդ շրջանում ստուգարքների և քննությունների վերահանձնումը կազմակերպվում է միայն քննական հանձնաժողովներով, որոնք ձևավորվում են Կրթահամալիրի ռեկտորի հրամանով:
97. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են սովորողի ակադեմիական տեղեկագրում:
98. Ակադեմիական տարբերության (պարտքի) վերահանձնում չի թույլատրվում:

## IV. Բակալավրի կրթական ծրագրով ամփոփիչ ատեստավորումը

99. Բակալավրի կրթական ծրագրի յուրացումն ավարտվում է շրջանավարտների պարտադիր ամփոփիչ ատեստավորմամբ, որը ավարտվում է որակավորմամբ:

100. Ամփոփիչ ատեստավորման առարկայական հարցաշարը, գործնական առաջադրանքները, խնդիրները և քննական տոմսերը նախապատրաստվում և հավանության են արժանանում համապատասխան ամբիոնի նիստում: Ամփոփիչ ատեստավորման քննական տոմսերը հաստատվում են Կրթահամալիրի ռեկտորի կողմից՝ առարկայական հանձնաժողովների նախագահների հետ համաձայնեցնելուց հետո:

101. Ամփոփիչ ատեստավորումն անցկացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կողմից:

102. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը պարտավոր է՝

1) տալ շրջանավարտի պատրաստվածության աստիճանի և որակավորման բնութագրի համապատասխանության համալիր գնահատականը.

2) որոշել ամփոփիչ ատեստավորման արդյունքներով շրջանավարտին որակավորում շնորհելու, մասնագիտական կրթության համապատասխան որակավորման աստիճանի ավարտական փաստաթուղթ և համապատասխան կրծքանշան տալու հարցը:

103. Ամփոփիչ ատեստավորումը ներառում է ուսումնական պլանին համապատասխան մեկ կամ մի քանի ատեստավորման փորձառություններ՝

1) առանձին առարկաներից ամփոփիչ քննություններ.

2) մասնագիտական ամփոփիչ համալիր քննություններ.

3) ավարտական աշխատանքի պաշտպանություն:

104. Եթե ուսումնական պլանում որպես ամփոփիչ ատեստավորման ձև նախատեսված են առանձին առարկաներից ամփոփիչ քննություններ, ապա սովորողի ցանկությամբ, նրա զեկուցագրի հիման վրա, համապատասխան ամբիոնի երաշխավորությամբ և Կրթահամալիրի ռեկտորի թույլտվությամբ առարկաներից մեկի ամփոփիչ քննության փոխարեն տվյալ առարկայի ամփոփիչ ատեստավորումը կարող է անցկացվել ավարտական աշխատանքի պաշտպանության ձևով:

105. Ամփոփիչ քննությամբ որոշվում է շրջանավարտի կողմից ուսումնական ծրագրով նախատեսված նյութի յուրացման աստիճանը, և այն ներառում է տվյալ առարկայի (առարկաների) ամբողջ նվազագույն բովանդակությունը:

106. Ամփոփիչ համալիր քննությունը կարող է անցկացվել համալիր որակավորման առաջադրանքի կատարման ձևով:

107. Ավարտական աշխատանքների պաշտպանության կարգը և գնահատման չափանիշները սահմանվում են Կրթահամալիրի գիտական խորհրդի կողմից:

108. Ամփոփիչ ատեստավորման փորձառություն համարվող առարկաները, ավարտական աշխատանքների պաշտպանության ժամանակացույցը սահմանված են ուսումնական գործընթացի պլանով: Այն դեպքում, երբ ամփոփիչ ատեստավորման փորձառության մեջ ընդգրկված է առանձին առարկայից ավարտական աշխատանքի պաշտպանություն, տվյալ առարկայից ամփոփիչ քննություններ չեն անցկացվում:

109. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են առանձին առարկաների և մասնագիտական ամփոփիչ համալիր քննություններ ընդունող, ավարտական աշխատանքների պաշտպանության քննական հանձնաժողովներ: Անհրաժեշտության դեպքում որևէ ատեստավորման փորձառության համար կարող են կազմավորվել մի քանի քննական առարկայական հանձնաժողովներ:

110. Կրթահամալիրի ռեկտորը որոշում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի և ամփոփիչ քննություններ ընդունող քննական հանձնաժողովների թվակազմերը՝ ելնելով կատարվելիք աշխատանքի ծավալից:

111. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կազմված է նախագահից, նրա տեղակալից, քարտուղարից և հանձնաժողովի անդամներից: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահը, նրա տեղակալը, քարտուղարը, անդամները և քննական հանձնաժողովների նախագահները նշանակվում են ՀՀ ներքին գործերի նախարարի հրամանով: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողով ձևավորելու վերաբերյալ հրամանի նախագիծը Կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժնի կողմից ներկայացվում է ՀՀ ներքին գործերի նախարարի հաստատմանը:

112. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ նշանակվում է շրջանավարտների ապագա գործունեության ոլորտի առաջատար մասնագետներից կամ գիտնականներից որևէ մեկը: Հանձնաժողովի նախագահը սահմանված կարգով կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքը, նախագահում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերը, ստորագրում դրա որոշումներն ու արձանագրությունները:

113. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահն իրավասու է գլխավորելու քննական հանձնաժողովներից մեկը կամ հանձնաժողովի անդամի իրավունքով մասնակցելու դրանցից ցանկացածի աշխատանքին.

114. Կրթահամալիրի ռեկտորն ի պաշտոնե ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի տեղակալն է:

115. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի քարտուղարը նշանակվում է Կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժնի կամ համապատասխան դեպարտամենտի աշխատողներից (ծառայողներից):

116. Ամփոփիչ քննություններ ընդունող քննական հանձնաժողովի կազմը հաստատվում է Կրթահամալիրի ռեկտորի հրամանով: Ամփոփիչ քննություններ ընդունող քննական հանձնաժողովի կազմում ընդգրկվում են պրոֆեսորադասախոսական անձնակազմը, անհրաժեշտության դեպքում՝ ոստիկանության ծառայողներ, այլ մասնագիտական բուհերի դասախոսներ, գիտահետազոտական հիմնարկների աշխատողներ:

117. Քննական հանձնաժողովների ընդհանուր թիվը սահմանվում է՝ ելնելով շրջանավարտների թվից և ատեստավորումների ցանկից:
118. Ամփոփիչ ատեստավորման թույլատրվում են այն շրջանավարտները, ովքեր ավարտել են հիմնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման լրիվ դասընթացը և հաջողությամբ հանձնել ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված բոլոր քննություններն ու ստուգարքները և կուտակել համապատասխան կրեդիտներ:
119. Ամփոփիչ քննությունները հանձնվում և ավարտական աշխատանքները պաշտպանվում են քննական հանձնաժողովների բաց նիստերում՝ հանձնաժողովների կազմի առնվազն երկու երրորդի պարտադիր մասնակցությամբ:
120. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի և քննական հանձնաժողովների որոշումներն ընդունվում են փակ նիստերում՝ հանձնաժողովների՝ նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է: Քննության նույն օրը կազմվում են քննական հանձնաժողովների նիստերի արձանագրությունները և հայտարարվում գնահատականները: Ավարտական աշխատանքների պաշտպանության, ամփոփիչ քննությունների, շրջանավարտներին որակավորում շնորհելու մասին հանձնաժողովի նիստերը արձանագրվում են քարտուղարի կողմից՝ արձանագրությունների մատյաններում:
121. Ամփոփիչ ատեստավորման արդյունքներն արձանագրվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար», «Անբավարար» և «Չներկայացած» գնահատմամբ՝ ստորև նշված սխեմային համապատասխան՝

| *Գնահատման միավոր* | *Գնահատականը տառանշումով* |
|---|---|
| 18-20 | Գերազանց |
| 13-17 | Լավ |
| 8-12 | Բավարար |
| 0-7 | Անբավարար |
| 0 | Չներկայացած |

122. Ամփոփիչ ատեստավորման փորձառությունները հաջողությամբ անցնելու դեպքում բակալավրիատի շրջանավարտներին՝ ատեստավորման հանձնաժողովի որոշմամբ շնորհվում է համապատասխան որակավորում և տրվում կրթությունը հաստատող ավարտական փաստաթուղթ, ինչպես նաև համապատասխան ձևի կրծքանշաններ:
123. Ամփոփիչ ատեստավորման փորձառությունները հաջողությամբ անցած անվճար ուսուցման շրջանավարտների ցուցակը Կրթահամալիրի կողմից ներկայացվում է ՀՀ ներքին գործերի նախարարության մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն՝ ոստիկանությունում համապատասխան պաշտոնի նշանակելու համար:

124. Բակալավրիատում գերազանցության դիպլոմ տրվում է ՄՈԳ-ի առավելագույն արժեքի առնվազն 90 %-ն ապահոված և ամփոփիչ ատեստավորումը միայն «Գերազանց» գնահատականներով հանձնած շրջանավարտներին: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի քարտուղարը անմիջականորեն պատասխանատու է շրջանավարտների գերազանցության դիպլոմ տալու իրավական և փաստական հիմքերի մասին հանձնաժողովին ներկայացվող տեղեկատվության հավաստիության համար: Նշված տեղեկատվությունը հանձնաժողովին ներկայացնելու վերաբերյալ հանձնաժողովի քարտուղարի կողմից կազմվում է արձանագրություն:

125. Սովորողն առանձին դասընթացի ամփոփիչ քննությունից, մասնագիտական միջառարկայական ամփոփիչ քննությունից կամ ավարտական աշխատանքից անբավարար գնահատական ստանալու դեպքում չի զրկվում ուսումնական պլանով նախատեսված ատեստավորման փորձառությունները շարունակելու իրավունքից:

126. Ատեստավորման փորձառություն չանցած շրջանավարտը թույլատրվում է վերաատեստավորման՝ երեք տարվա ընթացքում մեկ անգամ՝ սկսած հաջորդ ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման շրջանից: Ատեստավորման փորձառությունն չանցած անվճար կրթաձևի շրջանավարտին ՀՀ ներքին գործերի նախարարության մարդկային ռեսուրսների կառավարման վարչությունը թույլատրում է վերաատեստավորման՝ հիմքերը ներկայացնելով Կրթահամալիր: Ատեստավորման փորձառություն չանցած վճարովի կրթաձևի շրջանավարտն իր դիմումի հիման վրա թույլատրվում է վերաատեստավորման Կրթահամալիրի ռեկտորի հրամանով:

127. Համապատասխան փաստաթղթերով հիմնավորված՝ հարգելի պատճառով ամփոփիչ ատեստավորմանը չներկայացած շրջանավարտներին թույլատրվում է մասնակցել ամփոփիչ ատեստավորմանը՝ տվյալ ամփոփիչ ատեստավորման ժամանակացույցի շրջանում այլ ուսումնական խմբերի՝ տվյալ առարկայից քննության օրը կամ հաջորդ ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման շրջանում:

128. Ատեստավորման փորձառություններ համարվող առարկաների փոփոխության դեպքում սույն կարգի 126-րդ կետում նշված անձինք վերաատեստավորվում են Կրթահամալիրն ավարտելու տարում գործող ատեստավորման փորձառությունների ցանկին համապատասխան:

129. Բակալավրի կրթական ծրագրով ամփոփիչ ատեստավորման կարգը վերաբերելի մասով տարածվում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով ամփոփիչ ատեստավորման կապակցությամբ ծագած հարաբերությունների վրա, իսկ առանձնահատկությունների դեպքում կարգավորվում է այլ իրավական ակտով: Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով ամփոփիչ ատեստավորման արդյունքները գնահատվում են սույն կարգի 80-րդ կետով սահմանված սանդղակով:

## V. Մագիստրոսի կրթական ծրագրով ամփոփիչ ատեստավորումը

130. Սովորողի կողմից մագիստրոսի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է մագիստրոսական թեզի կատարումով և պաշտպանությամբ:

131. Մագիստրոսական թեզի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները (հեռակա ուսուցման պարագայում՝ վերջին 2 շաբաթները):

132. Ամփոփիչ ատեստավորումն անցկացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից:

133. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը պարտավոր է՝

1) տալ շրջանավարտի պատրաստվածության աստիճանի և որակավորման բնութագրի համապատասխանության համալիր գնահատականը.

2) որոշել ամփոփիչ ատեստավորման արդյունքներով շրջանավարտին որակավորում շնորհելու, մասնագիտական կրթության համապատասխան որակավորման աստիճանի ավարտական փաստաթուղթ տալու հարցը:

134. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կազմված է նախագահից, նրա տեղակալից, քարտուղարից և հանձնաժողովի անդամներից: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահը, նրա տեղակալը, քարտուղարը նշանակվում են ՀՀ ներքին գործերի նախարարի հրամանով, որի նախագիծը ՀՀ ներքին գործերի նախարարի հաստատմանը ներկայացվում է Կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժնի կողմից: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատվում է Կրթահամալիրի ռեկտորի հրամանով:

135. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ նշանակվում է շրջանավարտների ապագա գործունեության ոլորտի առաջատար մասնագետներից կամ գիտնականներից որևէ մեկը: Հանձնաժողովի նախագահը կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքը, նախագահում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերը, ստորագրում դրա որոշումներն ու արձանագրությունները և ապահովում շրջանավարտների պատրաստվածության աստիճանի գնահատման օբյեկտիվությունը:

136. Կրթահամալիրի ռեկտորն ի պաշտոնե ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի տեղակալն է:

137. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի քարտուղարը նշանակվում է Կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և

շարունակական կրթության ապահովման բաժնի կամ համապատասխան դեպարտամենտի աշխատողներից (ծառայողներից):

138. Մագիստրոսական թեզերը պաշտպանվում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բաց նիստերում՝ կազմի առնվազն երկու երրորդի պարտադիր մասնակցությամբ:

139. Ամփոփիչ ատեստավորման փորձառությունները հաջողությամբ անցնելու դեպքում մագիստրատուրայի շրջանավարտներին՝ ատեստավորման հանձնաժողովի որոշմամբ շնորհվում է համապատասխան որակավորում և տրվում կրթությունը հաստատող ավարտական փաստաթուղթ, ինչպես նաև համապատասխան ձևի կրծքանշան՝ Կրթահամալիրի բակալավրիատի շրջանավարտ չհանդիսացող անձանց համար:

140. Ամփոփիչ ատեստավորման փորձառությունները հաջողությամբ անցած անվճար ուսուցման շրջանավարտների ցուցակը Կրթահամալիրի կողմից ներկայացվում է ՀՀ ներքին գործերի նախարարության մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն:

141. Մագիստրատուրայում գերազանցության դիպլոմ տրվում է ՄՈԳ-ի հնարավոր առավելագույն արժեքի առնվազն 90 %-ը ապահոված և ամփոփիչ ատեստավորումը միայն «Գերազանց» գնահատականով հանձնած շրջանավարտներին: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի քարտուղարը անմիջականորեն պատասխանատու է շրջանավարտների գերազանցության դիպլոմ տալու իրավական և փաստական հիմքերի մասին հանձնաժողովին ներկայացվող տեղեկատվության հավաստիության համար: Նշված տեղեկատվությունը հանձնաժողովին ներկայացնելու վերաբերյալ հանձնաժողովի քարտուղարի կողմից կազմվում է արձանագրություն: